

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

/արտահերթ/

2022 թվականի ապրիլի 5-ին տեղի ունեցավ Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցի ծնողական խորհրդի արտահերթ նիստը՝ մասնակցությամբ 46 անդամների (հարգելի պատճառով բացակայում էին 5-ը): Դիտորդներ՝ Ե. Հարությունյան և Դ. Դումոյան:

### Օրակարգում՝

1. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներին տրված ձայների հաշվիչ հանձնաժողովի ընտրություն և զարգացման ծրագրերը ներկայացնելու համար ժամանակի սահմանում (զեկուցող՝ ծնողական խորհրդի նախագահ Աննա Աբրամյան):
2. Դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներ՝ Տաթևիկ Մելքոնյանի, Դիանա Մինասյանի, Նվարդ Հովսեփյանի, Անժելա Կարապետյանի զարգացման ծրագրերի քննարկում:
3. Ծնողական խորհրդի թեկնածուի ընտրություն՝ փակ քվեարկությամբ:

**Լսեցին՝** հաշվիչ հանձնաժողովի ընտրության հարցը: Ծնողխորհրդի նախագահ Աննա Աբրամյանը, սկսելով նիստը, առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդներին ծնողխորհրդի տված ձայները հաշվելու համար:

**Արտահայտվեցին՝** ծնողներն առաջարկեցին Մ. Դավթյան, Ա. Կարապետյան և Հ. Բադալյանի թեկնածությունները:

### ԾՆՈՂԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇԵՑ՝

ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- 1) Մ. Դավթյան,
- 2) Ա. Կարապետյան,
- 3) Հ. Բադալյան:

Ծնողխորհուրդը բաց քվեարկությամբ ընտրեց հաշվիչ հանձնաժողով:

**Լսեցին՝** դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերը այբբենական կարգով, յուրաքանչյուրին հատկացնելով 10-ական րոպե:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն և 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշումների՝ իրենց ծրագրերը ներկայացրին Ա.

Կարապետյանը, Ն.Հովսեփյանը, Տ. Մելքոնյանը, Դ. Մինասյանը: Հավակնորդները պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին: Ծավալվեց քննարկում:

**Արտահայտվեցին՝** Ա. Աբրամյանն ասաց, որ բոլոր ծրագրերը ներկայացվեցին հավուր պատշաճի, բոլոր հավակնորդներն էլ հետաքրքիր ծրագիր էին կազմել՝ ուղղված դպրոցի զարգացմանն ու, մասնավորապես, կրթության որակի բարձրացմանը:

Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց ծնողխորհրդի 46 անդամ:

**Լսեցին՝** ընտրության՝ հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

Հանձնաժողովը փաստեց, որ փակ քվեարկության արդյունքում ձայները բաշխվել են հետևյալ կերպ.

- 1) Տաթևիկ Մելքոնյան – 34 կողմ,
- 2) Նվարդ Հովսեփյան – 12 կողմ,
- 3) Դիանա Մինասյան – 0,
- 4) Անժելա Կարապետյան – 0,
- 5)
- 6) Բացակա-5:

Ելնելով փակ քվեարկության արդյունքներից՝

### **ԾՆՈՂԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇԵՑ՝**

Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոցի տնօրենի՝ ծնողական խորհրդի կողմից ընտրված թեկնածու համարել առավելագույն ձայներ ստացած Տաթևիկ Մելքոնյանին:

Ծնողխորհրդի նախագահ՝

Ա. Աբրամյան

Ծնողխորհրդի քարտուղար՝

Լ. Արիստակեսյան